ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԲԿԻՐ ԵՎ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ
ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

0014, ք. Երևան, Հր. Ներսիսյան 10 *հեռ. (00374 10) 24-48-47*

N ԴԴ-20-Ե-1718/14
ԵԱՔԴ/0061/11/13
01.02.2014թ.

Լուսինե Փարսադանյանի ներկայացուցիչներ
Անի Չատինյանին,
Արթուր Սաքունցին
և Արայիկ Զալյանին

/ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 59/

Ուղարկվում է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ բողոքը քննության առնելու մասին 2014թ. հունվարի 31-ի որոշումը:

Կից որոշումը՝ «4» թերթից:

ԴԱՏԱՎՈՐ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

Գործ № ԵԱՔԴ/0061/11/13

ՈՐՈՇՈՒՄ

ԲՈՂՈՔԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

31 հունվարի 2014թ. ք.Երևան

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը

նախագահությամբ՝ դատավոր	Ա.Մկրտչյանի
քարտուղարությամբ՝	Օ.Կիրակոսյանի
մասնակցությամբ՝	
դատախազ	Կ.Թորոսյանի
բողոք բերած անձ	Լ.Փարսադանյանի
ներկայացուցիչներ	Ա.Սաքունցի
	Ա.Չատինյանի

Դատական նիստում քննելով Լուսինե Փարսադանյանի և նրա ներկայացուցիչներ Արթուր Սաքունցի, Արայիկ Զալյանի և Անի Չատինյանի բողոքը՝ ՀՀ ոստիկանության Արաբկիրի քննչական բաժնի քննիչ Գ.Աղաջանյանի՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 23.10.2013թ. որոշման դեմ.

ՊԱՐԶԵՑ

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

2013 թվականի դեկտեմբերի 23-ին Լուսինե Փարսադանյանը և նրա ներկայացուցիչներ Արթուր Սաքունցը, Արայիկ Զալյանը և Անի Չատինյանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգով բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ ՀՀ ոստիկանության Արաբկիրի քննչական բաժնի քննիչ Գ.Աղաջանյանի՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 23.10.2013թ. որոշումը վերացնելու վերաբերյալ:

Ըստ ներկայացված նյութերի՝ «2012թ. սեպտեմբերի 4-ին Արաբկիր բժշկական կենտրոնում մահացել է Լուսինե Փարսադանյանի դուստրը՝ Էլեն Արմանի Փարսադանյանը:

2013թ. հունվարի 29-ին Լուսինե Փարսադանյանը հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժին:

2013թ. ապրիլի 23-ին Լուսինե Փարսադանյանի կողմից դիմում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազություն՝ նախաքննության մարմնի կողմից քրեական գործի շրջանակներում թույլ տրված խախտումները վերացնելու ուղղությամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու, մասնավորապես՝ վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնել իրեն որպես տուժողի իրավահաջորդ ներգրավել և մասնակից դարձնել դատաբժշկական փորձաքննությանը:

2013թ. ապրիլի 29-ին ՀՀ գլխավոր դատախազության կողմից Լուսինե Փարսադանյանի դիմումն ուղարկվել է Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազություն:

2013թ. մայիսի 8-ին Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազությունից դիմումն ուղարկվել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժին:

2013թ. օգոստոսի 28-ին դիմում-բողոք է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազին՝ Լ.Փարսադանյանին հանցագործության մասին հաղորդման հիման վրա որոշում

կայացնել տուժողի իրավահաջորդ ճանաչելու մասին և մասնակից դարձնել նշանակված փորձաքննությանը:

2013թ. սեպտեմբերի 11-ին ՀՀ Երևան քաղաքի դատախազությունից ստացվելէ գրություն, համաձայն որի դիմումն ուղարկվել է Երևան քաղաքի Արաբկիր ե Քանաքեռ Զեյթուն վարչական շրջանների դատախազություն:

2013թ. հոկտեմբերի 23-ին ՀՀ ոստիկանության Արաբկիրի քննչական բաժնի քննիչ Գ.Ռ.Ագաջանյանի կողմից կայացվել է նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում, որն իրենք ստացել են 2013թ. հոկտեմբերի 30-ին:

2013թ. նոյեմբերի 5-ին դիմում-բողոք է ներկայացվել ՀՀ գլխավոր և Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ Զեյթուն վարչական շրջանների դատախազություններ՝ ՀՀ ոստիկանության Արաբկիրի քննչական բաժնի քննիչ Գ.Ագաջանյանի 23.10.2013թ. նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու պահանջով:

2013թ. նոյեմբերի 25-ին ՀՀ Երևան քաղաքի դատախազ Ա.Դավթյանը կայացրել է բողոքը մերժելու մասին որոշում՝ այն անհիմն լինելու պատճառաբանությամբ, որոշումը ստացվել է 30.11.2013թ.»:

<u>Բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Ըստ բողոք բերած անձի, 2013թ. հոկտեմբերի 23-ին ՀՀ ոստիկանության Արաբկիրի քննչական բաժնի քննիչ Գ.Ագաջանյանի՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը ենթակա է վերացման հետևյալ պատճառաբանություններով.

Խախտվել են՝ քրեադատավարական օրենքով սահմանված ժամկետները. Լ.Փարսադանյանի կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել 2013թ. հունվարի 29-ին, հաղորդման վերաբերյալ նախապարաստվել են նյութեր, նշանակվել է հանձնաժողովային փորձաքննություն: Գործի քննությունը տևել է շուրջ 10 ամիս, 2013թ. հոկտեմբերի 23-ին կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում, այսինքն այն կայացվել է քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված ժամկետների խախտմամբ:

Հանցագործության մասին հաղորդման վերաբերյալ չի կատարվել օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննություն: Մասնավորապես, քննիչի կողմից չեն ձեռնարկվել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն կատարելու ուղղությամբ: Վարույթն իրականացնող մարմնի կողմից համապատասխան միջոցներ չեն ձեռնարկվել այլ ապացույցներ ստանալու ուղղությամբ: Քննիչի կողմից միջոցներ չեն ձեռնարկվել «Արաբկիր» բժշկական կենտրոնի աշխատակիցներից բացատրություններ վերցնելու համար և ըստ էության փորձաքննության եզրակացությունից այլ ապացույց չի ստացվել:

Բացի այդ, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը պատշաճ կերպով պատճառաբանված և հիմնավորված չէ, այն հիմնված է միայն 2013թ. հոկտեմբերի 18-ի թիվ 13-0637 հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննության եզրակացության վրա: Վարույթն իրականացնող մարմնի կողմից չի նշանակվել այլ փորձաքննություն՝ պարզաբանելու համար, թե ինչ պայմաններում է առաջացել է.Փարսադանյանի քթի և աչքի վրա եղած վնասվածքը, այն ինչ պատճառահետևանքային կապի մեջ է գտնվում երեխայի մահվան հետ:

Նշանակված փորձաքննությամբ չեն պարզաբանվել մի շարք հարցեր, որոնք էական նշանակություն կարող էին ունենալ է.Փարսադանյանի մահվան հանգամանքները պարզելու համար:

Լուսինե Փարսադանյանը, չնայած բազմաթիվ դիմում-բողոքների, տուժողի իրավահաջորդ չի ճանաչվել: Սույն գործով նախաքննությունն իրականացնող մարմինը տուժողի իրավահաջորդին մինչև փորձաքննություն կատարելը չի ծանոթացրել փորձաքննություն նշանակելու մասին հետաքննիչի որոշմանը, չի պարզաբանել տուժողի իրավահաջորդի իրավունքները, ինչպես նաև Լ.Փարսադանյանը հնարավորություն չի ունեցել փորձագետին լրացուցիչ հարցեր առաջադրելու: Այսինքն՝ փորձաքննությունը նշանակվել և իրականացվել է ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքով սահմանված նորմերի խախտումներով, ինչի հետևանքով տուժողի իրավահաջորդը հնարավորություն չի ունեցել իրականացնել իր իրավունքները:

Դատական նիստի ժամանակ բողոք բերած անձը և նրա ներկայացուցիչները պնդեցին իրենց բողոքը և խնդրեցին բավարարել այն:

Քննիչ Գ.Ազաջանյանը և դատախազ Կ.Թորոսյանն առարկեցին բողոքի դեմ՝ նշելով, որ նախաքննությունը կատարվել է քրեադատավարական օրենքի պահպանմամբ և քննիչի որոշումն օրինական է և հիմնավորված:

<u>Դատարանի պատճառաբանություններն ու եզրահանգումը.</u>

Լսելով բողոք բերած անձի, նրա ներկայացուցիչների բացատրությունները, դատախազի առարկությունները, ուսումնասիրելով ներկայացված նյութերը, դատարանը գտնում է, որ բողոքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն.

«(...) Քրեական դատավարության ընթացքում օրինականության խախտումների վերաբերյալ բողոքները պետք է մանրակրկիտ ստուգի քրեական վարույթն իրականացնող մարմինը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն, դատարանը, ի թիվս այլ լիազորությունների, իրավասու է՝

«(...) որոշումներ կայացնել կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ խուզարկության, առգրավման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման, ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու, նոտարական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման մասին, օրենքով նախատեսված դեպքերում քննել և լուծել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքները»:

ՀՀ Սահմանադրական դատարանը, 2009 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-844 որոշմամբ արձանագրել է.

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, վերջինիս՝ «Դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ» վերտառությունը կրող 39-րդ գլխի նորմերի, համալիր վերլուծությունը վկայում է, որ հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքների քննությունը, որպես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործառույթ, ունի իր առանձնահատուկ խնդիրներն ու նպատակները, մասնավորապես՝ բողոքարկվող որոշումների և գործողությունների օրինականությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և օրենսդրության այլ ակտերի պահանջներին համապատասխանությունը) ստուգելու արդյունքում պարզել անձի (կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության այլ մասնակցի կամ այլ անձի) իրավունքների և ազատությունների խախտման փաստը և կայացնել համապատասխան որոշում՝ անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության, կամ բողոքը մերժելու վերաբերյալ:

(...) Մասնավորապես, վիճարկվող 290 հոդվածի 1-ին մասի համաձա հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատի հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումները գործողությունները բողոքարկող սուբյեկտներ են քրեական դատավարությա մասնակիցները և այլ անձինք, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել է այդ որոշումներով և գործողություններով: Հիշյալ հոդվածի նույն մասի համաձա քրեական գործերով մինչդատական վարույթում որպես դատական բողոքարկմա անմիջական օբյեկտ (առարկա) են հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչ դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնո մարմինների՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշումները գործողությունները, այսինքն՝ այնպիսի որոշումներ ու գործողություններ, որպիսի հատկապես մատնանշված են օրենսգրքի համապատասխան նորմերում (...)»:

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի հետևում է, որ դատական վերահսկողության առարկա կարող են լինել հետաքննությա մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեությու իրականացնող մարմինների բոլոր այն որոշումները և գործողությունները, որոն խախտում են անձի իրավունքները և օրինական շահերը: Անձի իրավունքները օրինական շահերը խախտելու դեպքում հետաքննության մարմինների, քննիչ դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնո մարմինների որոշումները և գործողությունները դատական բողոքարկման առարկ լինելու հանգամանքն ուղղակիորեն բխում է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածու ամրագրված՝ դատական պաշտպանության իրավունքից, համաձայն որի «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ... համա հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործ հրապարակային քննության իրավունք» (տե՛ս Վալերի Գրիգորյանի վերաբերյալ գործ ՀՀ Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հուլիսի 25-ի ԵԿԴ/0031/11/08 որոշումը):

«(...) Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների ազատությունների պաշտպանության արդյունավետ միջոցների շարքում առաջնայի տեղ է գրավում դատական պաշտպանության իրավունքը, իսկ քրեական գործ մինչդատական վարույթի ընթացքում դատական պաշտպանության իրավունք արդյունավետ իրականացման երաշխիքներից է դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներ են՝

- դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների ազատությունների, օրինական շահերի պահպանության ապահովումը,

- դատավարության մասնակիցների և այլ անձանց խախտված իրավունքների ազատությունների վերականգնումը մինչդատական վարույթում:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը դատավարական օրենքով նախատեսված միջոցների համակարգ է, որն ուղղված դատական իշխանության սահմանադրական գործառույթների իրականացմանը գործ մինչդատական վարույթում՝ նպատակ ունենալով թույլ չտալ անձի իրավունքների ազատությունների անօրեն և չհիմնավորված սահմանափակումներ, ինչպես նա վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները (տե՛ս Ներսե Միսակյանի վերաբերյալ գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի ԱՐԴ1/0003/11/08 ապրիլի 10 ի որոշման 12-րդ կետը):

«(...) Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը հանդիսանում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությա յուրահատուկ միջոց, որը կատարում է քրեական հետապնդման մարմիններին զսպո գործոնի դեր և ուղղված է ինչպես անձի իրավունքների և ազատություններ իրականացումն ապահովելուն, այնպես էլ՝ բացառելու քրեական գործով մինչդատակա վարույթում այդ իրավունքների և ազատությունների անհիմն և անօրինակա սահմանափակումները և խախտումները (...):

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը գործում է որպես մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող միջոց, ուստի չի հետապնդում կատարված հանցագործության բոլոր հանգամանքները հետազոտելու և դրան համապատասխան որոշում կայացնելու նպատակ, որը բուն արդարադատության իրականացման գործառույթ է» (տե՛ս Արամ Սարգսյանի վերաբերյալ գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի ԵԿԴ/0503/06/10 որոշումը):

ՀՀ ոստիկանության Արաբկիրի քննչական բաժնի քննիչ Գ.Ագաջանյանն իր 23.10.2013թ. որոշմամբ նյութերով քրեական գործի մերժել է, նշելով, որ «(...) նյութերի նախապատրաստման ընթացքում հիմնավորվել է, որ է.Փարսադանյանի բուժման ողջ ընթացքում նրան ցուցաբերվել է բավարար բուժօգնություն, իսկ բուժման ընթացքում է.Փարսադանյանի հսկողությունը ոչ միշտ, ըստ գնահատման չափանիշների, կատարելը չի հանդիսանում երեխայի մահվան հետ անմիջական պատճառահետևանքային կապի մեջ գտնվող թերություն կամ բացթողում, ախտորոշումները և ցուցումները եղել են երեխայի վիճակին համապատասխան, բուժհաստատություններում ախտորոշումները որոշելիս է.Փարսադանյանի մահվան հետ անմիջական պատճառական կապի մեջ գտնվող թերություններ, բացթողումներկամ սխալներ թույլ չեն տրվել, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները կատարվել են պատշաճ: Նման պայմաններում է.Փարսադանյանին բուժօգնություն ցուցաբերած համապատասխան անձնակազմի արարքներում բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշները»:

Երևան քաղաքի դատախազը 25.11.2013թ. որոշմամբ քննիչի որոշման դեմ բերված բողոքը մերժել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ, նշելով, որ «(...) բովանդակային առումով Լ.Փարսադանյանին ընձեռնվել է տուժողի իրավահաջորդին բնորոշ իրավունքներից օգտվելու հնարավորություն, մասնավորապես՝ մասնակցելու դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության կատարմանը, որին վերջինս մասնակցել է, ծանոթացել է փորձաքննության ծավալներին և առարկային, նշվածի առնչությամբ որևէ դիտողություն կամ պահանջ չի ներկայացրել (...): Իսկ դատաբժշկական փորձաքննության եզրակացությամբ, ըստ էության, պարզաբանվել են սույն դեպքով նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները»:

ՀՀ Վճռաբեկ դատարանը 2013 թվականի փետրվարի 15-ի ԵԿԴ/0077/11/12 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«(...) քրեական դատավարությունն իրականացվում է ոչ միայն հանցագործությունը բացահայտելու և մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու, այլև հանցագործության արդյունքում տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով: Այլ խոսքով՝ տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը հանդիսանում է քրեական դատավարության կարևորագույն խնդիրներից մեկը:

«Տուժող» հասկացությունը, որպես իրավաբանական կատեգորիա, բնութագրվում է ինչպես իրավական, այնպես էլ դատավարական հատկանիշներով: Որպես իրավական հասկացություն՝ այն արտացոլում է ֆիզիկական կամ իրավաբանական անձին անմիջականորեն հանցագործությամբ վնաս պատճառելու օբյեկտիվ փաստը: Դատավարական իմաստով այն սահմանում է, թե ինչպիսի պայմաններում և կարգով է հանցագործությունից վնաս կրած անձը դառնում քրեական դատավարության մասնակից՝ ձեռք բերելով որոշակի դատավարական իրավունքներ և պարտականություններ:

(...) Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տուժողի իրավաչափ շահերի շրջանակում է նրան հասցված վնասի վերականգնումը, վնաս պատճառած արարքի հանգամանքների ամբողջական բացահայտումը ու դրա ճիշտ քրեաիրավական որակումը, հանցանք կատարած անձի դատապարտումը և նրա նկատմամբ արդարացի պատժի նշանակումը: Հետևաբար, քրեական դատավարության ընթացքին տուժողի (տուժողի իրավահաջորդի) մասնակցությունը մի կողմից անհրաժեշտ նախապայման է վերջինիս իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու համար,

մյուս կողմից, նպաստում է քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը: Քրեական վարույթում անհնար է իրականացնել դատավարական իրավունքներ և պարտականություններ՝ առանց դատավարության մասնակից լինելու, իսկ հանցագործության հետևանքով վնաս կրած անձի դեպքում արդյունավետ մասնակցությունը հնարավոր է միայն վարույթն իրականացնող մարմնի կողմից վերջինիս տուժող ճանաչելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո:

Տուժող ճանաչելու քրեադատավարական կարգին վերաբերող դրույթների համադրված վերլուծության արդյունքում կարելի է եզրահանգել, որ օրենսդիրը նշված դատավարական ակտի կայացման համար անհրաժեշտ նախապայման է համարում հանցագործության արդյունքում անձին բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս պատճառված լինելու կամ այդպիսի վնաս պատճառելու հավանականության հաստատումը, ինչը, սակայն, չի կարող մեկնաբանվել այնպես, որ անձին տուժող ճանաչելու համար անհրաժեշտ լինի հանցակազմի բոլոր տարրերի հաստատում կամ վնաս պատճառելու վերաբերյալ սպառիչ տվյալների հավաքագրում:

Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ քրեական գործ հարուցելու առիթի և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելու մասին: Նշված հոդվածի իմաստով՝ քրեական գործ հարուցելու հիմքեր են հանդիսանում այն տվյալները, որոնք վկայում են հանցագործության հատկանիշների առկայության մասին: Այլ խոսքով՝ եթե իրավասու պաշտոնատար անձը որոշում է կայացնում քրեական գործ հարուցելու մասին, ապա նա ձեռք բերված տվյալները բավարար է համարում հանցագործության փաստի (հանցակազմի օբյեկտիվ կողմի և օբյեկտի) առկայությունը հաստատված համարելու համար: Իսկ եթե քրեական գործ հարուցելու փուլում հայտնի է դառնում ենթադրյալ հանցագործությունից տուժած անձը, ապա վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է վերջինիս ճանաչել որպես տուժող և ներգրավել գործի քննությանը:

(...) Վճռաբեկ դատարանի վերոգրյալ դիրքորոշումը բխում է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի իմպերատիվ պահանջից առ այն, որ «Եթե քրեական գործ հարուցելու պահին հայտնի է հանցագործությունից տուժած անձը, քրեական գործ հարուցելու հետ միաժամանակ այդ անձը ճանաչվում է տուժող (...)»: Վճռաբեկ դատարանը գտել է, որ տուժող ճանաչելու քրեադատավարական կառուցակարգի միայն այդպիսի մեկնաբանության և կիրառության դեպքում է հնարավոր տուժողի (տուժողի իրավահաջորդի) համար ապահովել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածով նախատեսված իրավունքներից փաստացի օգտվելու հնարավորությունը և հասնել հանցագործության արդյունքում վնաս կրած անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու՝ քրեական դատավարության խնդրի արդյունավետ իրականացմանը (...)»:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Ն.Միսակյանի գործով կայացված ԳԴ4/0002/01/11 որոշման մեջ և իրավական դիրքորոշում ձևավորել այն մասին, որ.

«(...) Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներն են՝

- դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների և ազատությունների, օրինական շահերի պահպանության ապահովումը,
- դատավարության մասնակիցների և այլ անձանց խախտված իրավունքների և ազատությունների վերականգնումը մինչդատական վարույթում:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը դատավարական օրենքով նախատեսված միջոցների համակարգ է, որն ուղղված է դատական իշխանության սահմանադրական գործառույթների իրականացմանը գործի մինչդատական վարույթում՝ նպատակ ունենալով թույլ չտալ անձի իրավունքների և ազատությունների անօրեն և չհիմնավորված սահմանափակումներ, ինչպես նաև վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները (...)» (տե՛ս Ներսես Միսակյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԴ1/0003/11/08 որոշման 12-րդ կետը):

Դատարանն արձանագրում է, որ նախաքննության մարմինը քրեական գործ հարուցելու հիմքերի և առիթների առկայության պայմաններում օրենքով սահմանված կարգով քրեական գործ չի հարուցել և պատշաճ ընթացակարգով նախաքննություն չի իրականացրել, որի պատճառով Լ.Փարսադանյանը դատավարական կարգավիճակ ձեռք չի բերել և հնարավորություն չի ունեցել մինչդատական վարույթի ընթացքում օրենքով սահմանված կարգով բողոքարկելու նախաքննության մարմնի դատավարական գործողությունները: Մասնավորապես, Լ.Փարսադանյանը դատավարական կարգավիճակի բացակայության պատճառով հնարավորություն չի ունեցել ծանոթանալու դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշմանը, փորձագետի եզրակացությանը, ինչպես նաև զրկված է եղել նոր հարցադրումներ կատարելու և այդ կապակցությամբ միջնորդություններ և առարկություններ ներկայացնելու հնարավորությունից:

Նախաքննության մարմինը չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջները, չի ապահովել լրիվ և բազմակողմանի քննություն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար (...)»:

Նյութերից չի երևում, արդյոք քննիչը համապատասխան բուժհաստատություններից Լ.Փարսադանյանի հիվանդության պատմության վերաբերյալ բժշկական փաստաթղթերն առգրավել է, թե՝ ոչ, և այժմ որտեղ են դրանք գտնվում:

Հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշում կայացնելիս ուղղակի հարցադրում չի արվել, թե որն է էլեն Փարսադանյանի մահվան հիմնական և անմիջական պատճառը, և մի շարք այլ հարցադրումներ:

Այսպիսով, դատարանը գտնում է, որ խախտվել են Լուսինե Փարսադանյանի իրավունքները, քանի որ վերջինս դատավարական կարգավիճակ չունենալու պատճառով զրկված է եղել իր իրավունքները պաշտպանելու փաստացի հնարավորությունից:

Նշված պայմաններում, դատարանը գտնում է, որ Լ.Փարսադանյանի և նրա ներկայացուցիչներ Ա.Սաքունցի, Ա.Զալյանի և Ա.Չատինյանի բողոքը հիմնավոր է, այն պետք է բավարարել, և պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնել Լուսինե Փարսադանյանի իրավունքների խախտումը:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 290-րդ և 379-րդ հոդվածներով, դատարանը

ՈՐՈՇԵՑ

Լուսինե Փարսադանյանի և նրա ներկայացուցիչներ Արթուր Սաքունցի, Արայիկ Զալյանի և Անի Չատինյանի բողոքը՝ ՀՀ ոստիկանության Արաբկիրի քննչական բաժնի քննիչ Գ.Աղաջանյանի՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 23.10.2013թ. որոշումը վերացնելու վերաբերյալ, բավարարել:

Պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնելու Լուսինե Փարսադանյանի իրավունքների խախտումը:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ հրապարակման պահից տասնօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ